## 12. ԿԱՐՄՐԱՇԵՆ (ՓՅՈԹԱՆԼԻ)

*Հերհերի ձորահովտի ամենավերին գյուղն է այժմ։ Հուշարձանների և արձանագրությունների մնացորդները վկայում են, որ Վայոց ձորի հնագույն բնակավայրերից է։ Ղ. Ալիշանը կարծում է, որ հնագույն Դաւանի գյուղն է սա, որ թուրքական տիրապետությամբ դարձել է Փյոթանլի[1]։*

*Գյուղի շրջակայքը ընդարձակ և բարեբեր լեռնալանջ է, որտեղ, նախկինում և մինչև վերջերս էլ, տեղավորված էին մի քանի մանր գյուղեր, որոնց ավերակները մնում են (ձորահովտում գյուղերը կենտրոնացվել են և այժմ միայն 2 մեծ գյուղեր կան. Հերհեր և Վերնաշեն)։*

*Գյուղը բարեշեն է եղել հատկապես Օրբելյանների տիրապետության ժամանակ։ Հին գյուղատեղի արևելյան եզրին այժմ էլ մնում է այդ ժամանակին վերաբերող մի նշանավոր հուշարձան-կոթող, որն իր մեծությամբ և արվեստով առաջնակարգ տեղ է գրավում իր տեսակի մեջ։ Այդպիսի հուշարձանները սիրված էին Օրբելյանների կողմից։ Դրանցից մի քանիսը պահպանվել են նրանց նստոց Եղեգիս ավանի ավերակների մեջ։*

*Հերհերի ձորահովիտը Օրբելյանների օրոք պատկանում էր նրանց տան «ապարապետ» (հեծելազորի հրամանատար) և վասալ իշխան Շահուռնիններին, սակայն Վերնաշենի արձանագրությունների մեջ վերջիններիս մասին հիշատակություններ չկան։ Հավանաբար այս գյուղի ամենահարուստ արոտավայրերում էին բուծվում և սնվում Օրբելյանների ռազմական նժույգների երամակները՝ «ապարապետ» Շահուռնինների հսկողությամբ։*

*Ժողովածուում զետեղված արձանագրությունները գտնվում են այժմյան գյուղից դուրս։ Դրանցից առաջին և հնագույն խումբը (№ 102, 103) գտնվում է գյուղից արևելյան կողմում ջրաղացի մոտ։ Այստեղ մի փոքր և ժայռոտ բլրի վրա պահպանվել են փոքրիկ եկեղեցու ավերակները, որոնց մոտ և կանգնած են եղել արձանագրությունները կրող զույգ խաչքարերը։*

*Արձանագրությունների երկրորդ և թվով մեծ խումբը գտնվում է հին Փյոթանլի գյուղատեղի ավերակների մեջ, ցան ու ցիր, այժմյան գյուղից մոտ մեկ ու կես կիլոմետր հեռու, դեպի հարավ-արևմուտք։ Այստեղ մնացել են երկու եկեղեցիների և չորս գերեզմանատների մնացորդներն ու նշանավոր կոթող-հուշարձանը։ Այս գյուղատեղը բազմիցս շենացել ու ավերվել է. այդ վիճակի են ենթարկվել նաև հուշարձանները։*

*Արձանագրությունների երրորդ խումբը գտնվում է Կարմրաշենից մոտ երեք կիլոմետր դեպի հարավ-արևմուտք՝ Հին Փյոթանլուի տակ, ժայռերի արանքում ծվարած Գյոլարաս գյուղատեղի ավերակների մեջ։ Այստեղ կան միայն եկեղեցու հիմնապատերը և մի շարք խաչքարեր ու գերեզմանաքարեր՝ կանգուն և ընկած։*

*Այս գյուղատեղը գտնվում է Կարմրաշեն և Հերհեր գյուղերի արանքում։ Արձանագրությունների ժամանակով ու բովանդակությամբ կապված է ավելի Հերհերի հետ։*

**102. *ԽԱՉՔԱՐ, ընկած է գյուղից արևելք, ավերակ ջրաղացի առվի կողքին. ճակատին, տակին և թիկունքին։***

ԹՎ. :ՆԼԹ: (990) Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍՆՊԱՏԱ[Յ] ՈՐԴՈ ՎԱՍԱԿԱ ԿԱՆԳՆԵՑԱՒ ՆՇԱՆՍ Ի ՁԵՌՆ ԳՐԳՈՐԿԱ[Յ] ՅԻՇԵԱՑ ՔՍ.

*Թիկունքին՝*

ԵՍ ԳՐԳՈՐԻԿ, ՈՐԴԻ ԳԻՈՐԳ[ԱՅ], ԱԾԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆԲ ԳՏԻ ՉԱՐՉԱՆՍ. ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԵԾ Յ[Ո]ՒՍԱՒՍ ԲԵՐԻ [Ի] ԴՈ[Ւ]ՌՆ ԵԿԵ-

---

[1] *«Սիսական», 109։*





ԴԼԵՑՈՑՍ.ԿԱՆԳՆԵՑԻ ՆՇԱՆ ՍՈՒՐԲ
ԽԱՉԻՍ ՉԱՒԱԿԱՑ ԱՐԵՒՇԱ-
ՏՈՒԹԵԱՆ. ՈՐ ԱՒ.ՈՒ.ՐՍ ԱՀԵԴ
ԳԱԼՍՏԵԱՆ ՈՐԴՒՈՑՆ Ա̄Ց. ԱՌ-
ԵԼԱԼ ԶՍԱ ԴԱՆՊԱՐ ԼՈՒՑՍՈ
ԸՆԴ ԱՌԱՋ՝ ՏԵՍԱՆԵԼ ԶՓԱՌՍ
Ք̄ՍԻ. ՈՐՔ ԸՆԹԵՌՆՈՒՔ ԶԳԾԱ-
ԳԻՐՍ Ի ՎԵՄՍ ՔԱՆԴԱԿԵԱԼՍ,
ՅԻՇԵՑԷՔ ԵՒ ԶԻՍ ԶՑԱՒԳՆԱ-
ՄԵԴԼՍ:

Ծանոթ. *Խաչքարն իր տեսակի հնագույն օրինակների ոճով է, պարզ և արտահայտիչ քանդակներով։ Երկարությունը 3,66 մետր է, լայնությունը 90 սմ. ներքևում ավելի նեղանում է։ Այժմ այն ընկած է և թիկունքի արձանագրությունը ծածկված է։ Մենք այն կանգուն ենք տեսել 1932 թ. և նկարել։ Թիկունքի արձանագրության բովանդակությունից երևում է, որ այն ավելի ուշ է գրված, բայց ոչ շատ ուշ ճակատի արձանագրությունից, որովհետև տառաձևերը XI դարի են։*

*Հրատ. Ջալալեանց, II, 137։ Քաջբերունի. Արարատ, 1889, 283. Ալիշան, 110։*
Լուսանկ. 29, 29ա

**103.** ***ԽԱՉՔԱՐ,*** *եղել է Նախորդի մոտ։ Այժմ չկա։*

Թվին :ՑՀԴ: կանգնեցաւ սուրբ խաչս · · · · յանուն տեառն Աշոտոյ, որդւոյ Սահակայ Սիւնեաց · · · ·

*Հրատ. Ջալալեանց, Բ, 137։ Ալիշան, 110։*

**104.** ***ԿՈԹՈՂ-ՀՈՒՇԱՐՁԱՆ,*** *գյուղից մեկ կիլոմետր հարավ, ավերակների մեջ, խաչքարի ճակատին և առաքյալների գլուխների տակ։*




· · · ԷՂԻԿՈՒՄԻ ՍՄՊԱՏԻ. Թ̄Վ. :ՁԽ:
ՍԲ. ՊԵՏՐՈՍ. ՍԲ. ՊՕՂՈՍ

Ծանոթ. *Կոթողի կենտրոնում եղել են զույգ խաչքարեր, որոնցից միայն հարավայինն է մնացել՝ արձանագրության վերոհիշյալ մնացորդով։*

*Հրատարակիչների մոտ կան միայն թվականը և առաքյալների անունները։*

*Արձանագրության բոլոր տառերն ուռուցիկ են։ Իր տեսակների մեջ այս կոթողն ամենամեծերից և գեղեցիկներից է։ Այժմ քանդված է ճակտոնն ամբողջովին իսկ կողքերից՝ մասամբ։*

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889, Ն. 283։ Ալիշան, Սիսական, 109։*

**105. ԿՈԹՈՂ-ՀՈՒՇԱՐՁԱՆԻ** *հարավային պատին, արևի ժամացույցի թվերը։*




Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ծ Ի Լ

*Ծանոթ. Տառերն տառացիկ են։*

Լուսանկ. 30




**106. ԽԱՉՔԱՐ,** *մեծ և գեղաքանդակ, կանգնեցված է ժայռաբեկորի վրա. նույն գյուղատեղու մեջ. ճակատին և ատկին, 8 տող։*



Ի ԹՎ.ԻՍ ՀԱՅՈՑ :ՉԾԲ: (1303) |ԵՍ ԽՈՅԴԻԱՆ ՄԵ|Ծ ՅՈՒՍՈՎ ԵՒ ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԿԱՆ|ԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ . . . . .
. . . . . . . . .|. . . . . . . . .

Լուսանկ. 31



**107. ԽԱՉՔԱՐ,** *նույն ավերակների մեջ, շրջանակներին 4 տող։*

ԳՐԳՈՐ ՆԱՀԱՅ|ՏԱԿ Յ|Ի|ՇԵՑԷՔ |Ի|
ՏՐ| ԹՎ. :Չ: . . . .

*Ծանոթ. Թվականի տասնավորի և միավորի մնացորդները կարող են ընթերցվել ԽԱ կամ ԻԱ։*

*Հրատ. Ջալալյանց, Բ, 136։ Ալիշան, 111։*

Լուսանկ. 32

**108. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *տափակ, նախորդից արևելք, երեսին 2 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԿԻՍՏ ԱԼԵ|ՔՍԱՆՈՍԻՆ.
ԹՎ. :ՋՀԲ: (1523):

**109. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *օրորոցաձև, հյուսիսային կողին կենցաղային տեսարան, հարավում՝ չորս խորաններ, մեջը խաչեր. երեք շրջանակներին գրված է։*



ԵՍ ԴԻԼԻՋԱՆՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽ|ԱՉ|Ս
ՀԱՒՐ ԻՄՈՅ ԴԱՄՄՈԱՈ ԹՎ. :ՌԾԴ: (1605)
ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

**110. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *օրորոցաձև, հյուսիսային կողմում կենցաղային տեսարան։ Գտնվում է նույն ավերակների մեջ՝ բլրի ավերակ եկեղեցու մոտ. հարավում խորաններ և շրջանակներին ոլոված։*



ԿԱՄԱՒՆ| Ա⌊Ց⌋ ԵՍ ՅՈՒՍԷՓ ԿԱ⌊Ն⌋Կ-ՆԵՑԻ ՉԽԱՉՍ ՓՐԿՈՒ⌊ԹԵ⌋| ՀՈԳՈՅ ՊԱՐԵԳԻՆ.՝ ՈՎ, ՈՐ ԿԱՐԴԱ՝ ՅԻՇԵՑԷՔ;

ԹՎ. ՌԾԶ: (1607)

**111. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *նախորդի մոտ, հյուսիսում կենցաղային տեսարան, հարավում խաչեր, արևելյան ճակատին 6 տող.*



ԿԱՄԱՒՆ ՍՑ ԵՍ ՎԱՐ|ԴԱՆՍ ԿԱ⌊Ն⌋ԿՆԵՑԻ| ԶԽ⌊Ա⌋ՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻ| ՀՈԳՈՅ ՄԻՔԱՅԷԼ ԱՂԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ՎԱՐԴ|ԱՆ ԱՂԻՆ.

Ծանոթ. XVI—XVII *դարերի*

*Հրատ. Ջալալեանց, Բ, 136։ Ալիշան, 110։*

ԱՅՍ ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐՈՒՄ ԵՂԵԼ ԵՆ ԵՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

**112. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.**

Սուրբ խաչս բարեխօսս է Դաւիթ բէկին. թվին ՌՁԸ: (1639):

*Հրատ. Ջալալեանց, Բ, 136։ Ալիշան, 109։*

**113. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.**

Այս է տապան Սէթա Խաթունին, թվին ՌԾԵ: (1606):

*Հրատ. Ջալալեանց, Բ, 136։ Ալիշան, 109։*

**114. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.**

Այս է հանգիստ Գրիգոր բէկին

*Հրատ. Ջալալեանց, Բ, 136։ Ալիշան, 109։*

**115. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.**

Այս է հանգիստ Մանուչարին. թվին ՉԻԸ: (1279):

*Հրատ. Ալիշան, 109։*

**116. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.**

Այս է հանգիստ վարդապետին Յակովբայ, թվին ՉԿԹ: (1320):

*Հրատ. Ալիշան, 109։*

**117. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.**

. . . Եւ իւր եղբաւրն Սարգսին, թվին :ՉԻԸ: (1279):

*Հրատ. Ալիշան, Սիսական. 109։*

Արևմտյան կողմի գերեզմանատանը:

**118. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.**

Ես Յոհաննէս կանգնեցի զխաչս ի բարեխաւսութիւն հոգւոյ իմոյ.

*Հրատ. Ջալալեանց, Բ, 136։ Ալիշան. 110։*

**119. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.**

Ի թվին :ՉԱ: (1252): ի բարեպաշտ իշխանութեան Աւագին
կանգնեցաւ խաչս. Ես Սահակ որդի Սիմոնայ մեծ յուսով
կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ:

*Հրատ. Ջալալեանց, Բ, 136։ Ալիշան, 110։*

## 13. ԳՅՈՒՅԱԲԱՆ ԳՅՈՒՂԱՏԵՂ

**120. ՍԱԼՔԱՐ,** *անմշակ. գյուղատեղի կենտրոնում, կանգնած ավերակների մեջ, գետակի աջ ափին. վրան խաչ և արձանագրություն. 11 տող.*




ԹՎ. :ՉԼԲ: (1283) ԵՍ ՍԱՍՆ|ԱՑՍ ՈՒ ՍԱՐՍՈՒ
ՈՒ ՍԱՐՔ|ԻՍ ԿԱՆԳ⌊Ն⌋ԵՑԱՔ ԶԽ|ԱՉՍ Ի
Բ|ԱՐԷԽԱ⌊Ւ⌋Ս|ՈՒԹԻ ԾՆՈՂ|ԱՑ Մ⌊Ե⌋ՐՈՑ|
ԻՇԽԱՆԻՆ ԵՒ| ԱՄՈՒՍՆ|ՈՅՆ . . .

Ծանոթ. *Արձանագրությունը չի շարունակված, թեև ազատ տեղ կա։*

**121. ԽԱՉՔԱՐ,** *մեծ և գեղաքանդակ, կոտրված է երկու մասի, օգտագործվել է որպես ցանկապատի քար՝ գյուղից վեր, դեպի Հերհեր տանող ճանապարհի եզրին. 5 տող.*




ԹՎ. :ՉԼԴ: (1285) |ԵՍ ⌊Ս⌋ԱՐԳԻՍ ՈՒ
ՍԱՐԿԱՒԱԳԻՍ ԿԱ|ՆԿՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ
ԾՆՈՂ|ԱՑ| ՄԵՐՈՑ, ՀԵԾԵ⌊Ա⌋Լ
ԱՒԱԳԻՆ, ԴԱԽ|ԱԹԻՆ.

Ծանոթ. *Առաջին բեկորի վրա թվականն է, իսկ ներքևում մնացածը։*

**122. ԽԱՉՔԱՐ,** *մեծ և գեղաքանդակ, կանգնեցված է նախորդի մոտ՝ քիվին, 1 տող.*




ԹՎԻՍ :ՉԽԹ: (1300)